# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱՄԱՍ

*Արցախի պետական համալսարանը մշտապես իր ուշադրության առանցքում է պահում բուհ-բանակ կապը: Այս շրջանակում դեկտեմբերի 8-ին մայր բուհի նախաձեռնությամբ մի խումբ ուսանողներ և աշակերտներ համերգային ծրագրով այցելել են N զորամաս՝ զինվորների առօրյային հետաքրքիր գույներ ավելացնելու նպատակով:*



Միջոցառմանը, բացի մայր բուհի ուսանողներից, ընդգրկված էին նաև Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի սաները, աշակերտներ Ստեփանակերտի համար 1, 7, 8 դպրոցներից: Հայրենասիրական, ազգագրական կատարումներին լրացրին ելույթները, որոնք արժևորում էին հայ զինվորի սխրանքը, հայոց բանակի մարտունակությունն ու անպարտ ոգին: ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ողջունելով ՊԲ անձնակազմին, զինվորներին մաղթել է բարի և անփորձանք ծառայություն: Նա կարևորել է բուհ-դպրոց-բանակ կապի ամրապնդումը՝ խորհրդանշական համարելով աշակերտ-ուսանող-զինվոր եռամիասնությունը. «Մեզ բոլորիս միավորում է մեր ամենաթանկ արժեքը՝ հայրենիքը, անառիկ պահելու գաղափարը: Մեզնից յուրաքանչյուրը պետք է ունենա գերխնդիր նպատակ՝ յուրովի նպաստել մեր հայրենիքի հաջողությանը, պետականության զարգացմանը և ապրել ստեղծարար կյանքով»:

# ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ՝ ԲԵՐՁՈՐԻ ԹԻՎ2 ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՆԵՐԻՆ



*Ամանորին ընդառաջ՝ դեկտեմբերի 21-ին, ԱրՊՀ մի խումբ ուսանողներ, ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանի գլխավորությամբ, այցելել են երեխաների խնամքի եվ պաշտպանության Բերձորի թիվ 2 գիշերօթիկ հաստատություն:*

ՈՒԽ նախագահ Դիանա Խաչատրյանը նշել է, որ «Ուսանող-աշակերտ-զինվոր. միասնության ուժը» ծրագրի շրջանակում նախորդ տարի այցելել էին հաստատություն և երեխաներին խոստացել, որ հաջորդ այցը կլինի Ամանորին ընդառաջ: Մտահղացման մասին պատմել է ԱրՊՀ ռեկտորին, և համալսարանի ղեկավարության անմիջական աջակցությամբ կյանքի է կոչվել հերթական ծրագիրը: Ամանորյա մշակութային ծրագիր, երգ, պար, ասմունք, նվերներ, գրքեր, քաղցրավենիք, զարգացնող խաղեր և, իհարկե, Ձմեռ պապ ու Ձյունանուշ. այս ամենը համալսարանականների կողմից գիշերօթիկ հաստատության սաների համար էր, ինչն էլ երեխաների օրը դարձրեց տոնական:

«Ջերմ և անմիջական մթնոլորտ էր ստեղծվել: Կարծում եմ՝ կարողացանք երեխաներին ուրախացնել և հաճելի ակնթարթներ պարգևել Ամանորին ընդառաջ: Նրանց դուր եկավ մեր անակնկալը, իրենք էլ իրենց հերթին հանդես եկան երգ ու պարով, ինչը ամբողջացրեց տրամադրությունը՝ օրը դարձնելով տոնական և հագեցած»,-նշել է Դիանա Խաչատրյանը:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանն ընդգծել է, որ ուսումնական գործընթացին զուգահեռ համալսարանականները մեծ ուշադրություն են դարձնում նաև հանրօգուտ աշխատանքների իրականացմանը: Այդպիսիք արդյունավետ են, քանի որ նպաստում են ուսանողի ճիշտ արժեհամակարգի ձևավորմանն ու ամրապնդմանը:

«Ամանորին ընդառաջ գիշերօթիկի սաներին ուրախություն պարգևելը խորհրդանշական իմաստ ուներ: Մենք պետք է մեր ուշադրության առանցքում պահենք հատկապես առանձնահատուկ խնամքի և ուշադրության կարիք ունեցող երեխաներին: Օգտվելով առիթից՝ մաղթում եմ բոլոր երեխաներին անհոգ մանկություն և երազանքների իրականացում»,-նշել է պրոռեկտորը:




«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ

*Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ*

Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զարինե Սառաջյան

Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am



# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 09(214)
դեկտեմբեր, 2018


# ԱրՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



*Հարգելի՛ համալսարանականներ, սիրելի՛ ուսանողներ*

*Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ: Անցնող տարին լի էր մարտահրավերներով և ձեռքբերումներով: Համալսարանում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր՝ տարբեր ուղղություններով խթանելով բուհի առաջընթացը: Աշխատանքներն արդյունավետ են եղել ուսումնական գործընթացի բարելավման, գիտահետազոտական աշխատանքների ընդլայնման, ուսանողական միջոցառումների ակտիվացման, նյութատեխնիկական բազայի հարստացման առումներով:*

*Անցնող տարում ունեցած ձեռքբերումներին զուգահեռ բուհի համար կարևորագույն խնդիրների՝ համալսարանի հավատարմագրման և գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման ուղղությամբ տրվեց աշխատանքների մեկնարկը: Կրթության որակի շարունակական բարելավումը և բոլոր ուղղություններով աշխատանքների արդյունավետության բարձրացումը համարում ենք համալսարանի գործունեության գերակա նպատակներից և այս սկզբունքով աշխատելու դեպքում, համոզված եմ, հաջողությամբ կկարողանանք հաղթահարել մարտահրավերները և առկա խնդիրների լուծման ուղղությամբ կգտնենք օպտիմալ լուծումներ:*

*Շնորհավորում եմ Արցախի, ՀՀ և Սփյուռքի մեր բոլոր հայրենակիցներին ու գործընկերներին: Թող 2019 թվականը լինի խաղաղության և նորանոր ձեռքբերումների տարի: Մաղթում եմ բոլորիդ հաջողություններ, կրթության և գիտության ոլորտում նորանոր ձեռքբերումներ, անձնական և համազգային իղձերի իրականացում:*

*Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:*

# 2018-19 ՈՒՍՏԱՐՎԱ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄՈՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ 2-ՐԴ ԸՆԹԱՑԻԿ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*2018թ. դեկտեմբերի 11-ից 24-ը ԱրՊՀ գիտելիքների ստուգման կենտրոնում ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի կողմից կազմակերպվել է եզրափակիչ գնահատումով ավարտվող դասընթացների 2-րդ փուլի ստուգումները, որոնց արդյունքների մասին հետաքրքրվել ենք ԱրՊՀ ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ Գոհար Գասպարյանից: Նրա խոսքով՝ կազմակերպվել է թվով 196 ստուգում, որից 33-ը տնտեսագիտական ֆակուլտետից, 45-ը՝ բանասիրական, 60-ը՝ բնագիտական, 32-ը պատմության և իրավագիտության, 26-ը՝ մանկավարժության և սպորտի: Տնտեսագիտական ֆակուլտետի 600 (ուսանող-քննություն)-ից 289-ը (48%) ապահովել է բարձր, 250-ը (41,5%) միջին, իսկ 41-ը՝ (7%) ցածր ցուցանիշ: Բանասիրական ֆակուլտետի 981 (ուսանող-քննություն)-ից 496-ը (50,5%) ապահովել է բարձր, 423-ը (43%) միջին և 54-ը (5,5%) ցածր ցուցանիշ: Բնագիտական ֆակուլտետի 832 (ուսանող-քննություն)-ից 407-ը (49%) ապահովել է բարձր, 297-ը (35,5%) միջին և 107-ը (13%) ցածր ցուցանիշ: Պատմության և իրավագիտության ֆակուլտետի 563 (ուսանող-քննություն)-ից 428-ը (76%) ապահովել է բարձր, 109-ը (19,5%) միջին և 16-ը (3%) ցածր ցուցանիշ: Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի 410 (ուսանող-քննություն)-ից 131-ը (32%) ապահովել է բարձր, 205-ը (50%) միջին և 67-ը (16,5%) ցածր ցուցանիշ: Ընդհանուր համալսարանական թիվը կազմել է 3386 (ուսանող-քննություն), որից 1751-ը կամ 51,5%-ը արձանագրել է բարձր, 1284-ը՝ կամ 38%-ը՝ միջին և 285-ը՝ կամ 8,5%-ը ցածր ցուցանիշ: Ստուգումներին չի ներկայացել 67 ուսանող, որը կազմում է 4,5%-ը:*

*Պատասխանատուն, ընդհանուր առմամբ, գոհ է քննաշրջանի արդյունքից, ընդգծված թերություններ, բացթողումներ չեն արձանագրվել:*

# ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ «ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ: ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ



*Դեկտեմբերի 24-ին ԱրՊՀ է այցելել ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի պատվիրակությունը՝ տնօրեն Ռուբեն Թոփչյանի գլխավորությամբ: Այցի օրակարգում երկօրյա աշխատաժողովն է՝ «Որակի ապահովման համակարգ: Ինստիտուցիոնալ հավատարմագրում» թեմայով, որին մասնակցում էին Արցախում գործող բուհերի ղեկավարներ, բուհերի ինքնավերլուծություն իրականացնող խմբերի ներկայացուցիչներ:*

Աշխատաժողովի մասնակիցներին ողջունել և արդյունավետ աշխատանք է մաղթել ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը՝ կարևորելով հավատարմագրման գործընթացն ու ՀՀ ՈԱԱԿ կողմից ցուցաբերվող մասնագիտական աջակցությունը՝ գործընթացն իրականացնելու հարցում:

«ԱՀ կառավարության որոշմամբ Արցախի բոլոր պետական և ոչ պետական բուհերը պետք է անցնեն հավատարմագրում անկախ կառույցի կողմից: Նախկինում ԱՀ և ՀՀ բուհերը պետական հավատարմագրում չունեին, քանի որ ընդունված էր, որ եթե հիմնադիրը կառավարությունն է, ապա հավատարմագրման կարիք չկա: Սակայն նոր որոշման համաձայն՝ նշված է նաև ժամկետ, ըստ որի՝ մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը բոլոր բուհերը պետք է դիմեն հավատարմագրման, հավատարմագրման չդիմելու դեպքում բուհերը կորցնում են լիցենզիան: Հենց այս նպատակով հրավիրել ենք ՀՀ ՈԱԱԿ տնօրեն Ռ. Թոփչյանին և կենտրոնի ներկայացուցիչներին, որպեսզի հավատարմագրման գործընթացի համար անհրաժեշտ տեղեկություններ տրամադրեն Արցախի բուհերի ներկայացուցիչներին»,-աշխատաժողովի նպատակը մանրամասնել է ԱրՊՀ ռեկտորը՝ շնորհակալություն հայտնելով ՀՀ ՈԱԱԿ-ի ներկայացուցիչներին՝ Արցախ այցելելու և մասնագիտական աջակցություն ցուցաբերելու համար:

Ողջույնի խոսք է ասել և աշխատաժողովի նշանակությունը կարևորել նաև ՈԱԱԿ տնօրեն Ռուբեն Թոփչյանը: Խոսելով բուհերի հավատարմագրման անհրաժեշտությունից՝ նա հանգամանալից ներկայացրել է, թե ինչ է ենթադրում որակի ապահովման համակարգը, ինստիտուցիոնալ հավատարմագրումը՝ առանձնացնելով որակի ներքին և արտաքին ապահովումը, բուհում որակի ապահովման բաժնի դերը ռիսկերի բացահայտման գործում, որակի արտաքին ապահովումը, ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը:

«Բուհն ավարտելուց հետո ուսանողը պետք է աշխատատեղում կարողանա բավարար ծավալով կատարել իր մասնագիտական պարտականությունները: Բուհը պետք է կարողանա ապահովել երկրին անհրաժեշտ կարողությունների ձևավորում: Կրթության գերնպատակը սա պետք է լինի»,-ընդգծել է Ռ. Թոփչյանը՝ մասնագիտական գիտելիքներ տալուց բացի, կարևորելով նաև անհրաժեշտ կարողություններ ձևավորելու հանգամանքը: Նրա խոսքով՝ բարդ խնդիրներ լուծելու, քննադատական մտածելու և վերլուծելու, ստեղծագործող և նորարար մտածողություն ունենալու, միմյանց հետ համաձայնեցված աշխատելու, այսինքն՝ համագործակցելու, դատողություններ ունենալու և որոշում կայացնելու, սպասարկելու պատրաստ լինելու, բանակցելու, ճկուն մտածելու, զգացմունքները հետախուզելով կառավարելու կարողություններ ունեցող մասնագետներ պետք է կարողանալ պատրաստել:

«Այս կարողությունները պետք է ներառել ուսուցման ձևերի, մեթոդների մեջ, և դա կլինի որակի ապահովման ձեր ռազմավարությունը: Որակը այն է, որ դուք ունեք նպատակ, և այդ նպատակին հասնելու համար կարողանում եք կատարել համապատասխան գործողություններ: Եթե շահակիցը բավարարված չէ, ուրեմն որակ չկա»,-նշել է նա:

Ռ.Թոփչյանը կարևորել է նաև բուհերում աշխատանքային պլաններ ունենալու հարցը՝ հատկանշելով ռազմավարական, դասախոսների վերապատրաստման, երիտասարդ դասախոսների ներգրավման, կրթական ծրագրերի ցանկի վերանայման, շահակիցների հետ հաղորդակցման, որակի ներքին ապահովման գործողությունների աշխատանքային պլանները:

ՈԱԱԿ տնօրենը պատասխանել է նաև ներկաների հետաքրքրող հարցերին:

Աշխատաժողովի երկրորդ մասը շարունակվել է մասնախմբերում, որտեղ ՈԱԱԿ փորձագետներ Ա.Ութմազյանը, Լ.Ջաքարյանը՝ «Ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն», Վ.Գյուլազյանը՝ «Չափանիշի SWOT վերլուծության իրականացում» թեմաներով պարապմունքներ են անցկացրել ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն իրականացնող խմբերի հետ, որոնք միտված են հավատարմագրմանը նախապատրաստվելուն: Վերջում ներկայացվել է ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը և ծավալվել քննարկում:





# ԱրՊՀ-ՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԱՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

*Դեկտեմբերի 20-ին ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ,տ.գ.թ. Շուշան Ասրյանի նախաձեռնությամբ կազմակերպված գիտական սեմինարի ընթացքում ոլորտի պատասխանատուների հետ քննարկվել են սոցիալական աջակցության և ապահովության հիմնահարցեր:*



Բացելով միջոցառումը՝ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Մանգասարյանը համապարփակ ներկայացրել է ետպատերազմյան շրջանում մեր հանրապետության որդեգրած սոցիալական քաղաքականությունը՝ նշելով, որ այսօր էլ ոլորտի հատկացումները բյուջեի գերակշիռ մասն են կազմում:

«Ներկայումս իրականացվող ավելի քան 150-ից ավելի սոցիալական ծրագրերով հանդերձ՝ մեր հանրապետությունում շարունակում է առկա մնալ սոցիալական լարվածությունը և պահանջում այն հաղթահարելու նոր մոտեցումներ»,- նշել է Ռ. Մանգասարյանը:

Կառավարում մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողները քննարկվող թեմայի շրջանակներում ներկայացրել են սոցիալական աջակցության միջազգային փորձը, սոցիալական աջակցության մարմիններն ու օրենսդրությունը, ԱՀ սոցիալական աջակցության դաշտը, աջակցության ծրագրերը, սոցիալական աշխատողի դերն ու սոցիալական աջակցության համակարգի հիմնախնդիրները:

«Նման միջոցառումներով մենք նպատակ ունենք վերհանելու սոցիալական հիմնախնդիրները, որոնք կարող են դառնալ ապագա սոցիալական քաղաքականության թիրախը»,- քննարկվող խնդիրների արդիականությունը հիմնավորել է Շ. Ասրյանը՝ այն ներկայացնելով սոցիալական ոլորտում վարվող ներկայիս քաղաքականության համատեքստում:

ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության պատասխանատուները ողջունել են տնտեսագիտության ֆակուլտետի նախաձեռնողականությունն ու համագործակցությունը նախարարության հետ, անմիջականորեն մասնակցելով քննարկվող թեմաներին, մանրամասն ներկայացրել սոցիալական ծրագրերի բնույթն ու էությունը, ապա պատասխանել նաև հարցերին:

# ՀԻՇԱՏԱԿԻ ԵՎ ՄԵԾԱՐՄԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ



*ԱրՊՀ հայագիտական կենտրոնի և բանասիրական ֆակուլտետի համատեղ նախաձեռնությամբ դեկտեմբերի 5-ին կազմակերպված հուշցերեկույթը նվիրված էր Արցախյան պատերազմում հավերժի ճամփորդ դարձած, ԱրՊՀ ուսանող-ազատամարտիկ Իգոր Հասրաթյանին:*

Միջոցառմանը հրավիրված էին Ի. Հասրաթյանի հարազատներ, համալսարանականներ, հյուրեր: Կազմակերպիչներից գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ Ս. Բաղդասարյանը Ի. Գրիգորյանի կերպարը ներկայացրեց Արցախյան գոյապայքարի նվիրյալների համատեքստում. «Նրանք ուխտ ու տենչ ունեին Արցախը տեսնել ազատ, և հանուն այդ գաղափարի չխնայեցին ոչինչ: Նրանք հերոսացան՝ ապացուցելով, որ հերոսները չեն մեռնում, այլ լեգենդ են դառնում և իրենց կենսագծով սերունդներ առաջնորդում»:

Բանասիրական և պատմության ու իրավագիտության ֆակուլտետների ուսանողների կողմից պատրաստված գրական-գեղարվեստական ցերեկույթով ևս մեկ անգամ արժևորվեց հանուն հող հայրենյաց կյանքը զոհած հայորդիների ապրած-թողածը, որը միաժամանակ նորօրյա դաս էր ներկա սերնդին:

Համալսարանի ղեկավարության ու կազմակերպիչներին ընտանիքի անունից շնորհակալություն հայտնեց Իգոր Հասրաթյանի հայրը՝ Ալեքսանդր Հասրաթյանը՝անմահության ճանապարհը բռնածների կյանքն ու գործը արժևորելու, պարբերաբար նրանց անդրադառնալու համար. «Նրանք գնացին, որ մենք ապրենք, որ դասեր առնենք նրանց դավանանքից ու արժեքներից»:

Ի. Գրիգորյանի մասին հուշեր պատմեցին նրա դասախոսներն ու հարազատները, ովքեր հերոսին ներկայացրին որպես ընկեր, գաղափարակից, քաղաքացի:

# ԱրՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՀՌՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

*ԱրՊՀ դասախոսներ ֆ.մ.գ.թ., դոցենտ Գեորգի Սահակյանը, ֆ.մ.գ.թ., դոցենտ Լիանա Աբրահամյանը և մ.գ.թ., դոցենտ Լիանա Հայրապետյանը դեկտեմբերի 3-ից 7-ը մասնակցել են Հայ-Ռուսական համալսարանի 13-րդ ամենամյա գիտաժողովին:*



Հայ-Ռուսական համալսարանի ռեկտոր Արմեն Դարբինյանը ՀՌՀ-ի 13-րդ գիտաժողովի բացման խոսքում նշել է, որ խորհրդային ժամանակաշրջանից Հայաստանում կուտակվել է գիտական հզոր պոտենցիալ, և մեկ շնչին բաժին ընկնող գիտական արտադրանքով Հայաստանն առաջատարների թվում է նախկին ԽՍՀՄ երկրների շարքում:

«Այն շեշտադրումը, որ մենք դնում ենք գիտության զարգացման նկատմամբ, կարծում եմ՝ էապես տարբերում է մեզ երկրում գործող համալսարաններից: Ես միշտ համարել եմ, որ համալսարան գոյություն չունի, եթե համալսարանում չկա գիտություն»,- ընդգծել է Ա.Դարբինյանը:

Գիտաժողովի մասնակից ԱրՊՀ պատվիրակները կարևորել են միջբուհական գիտական շփումներն ու մասնագիտական արդիական հիմնախնդիրների շուրջ բանավիճային քննարկումներին մասնակցություն ունենալը՝ գիտաժողովի աշխատանքները համարելով արդյունավետ:

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ



*Դեկտեմբերի 11-ին ԱրՊՀ մի խումբ ուսանողների հետ ունեցած հանդիպման ընթացքում ուսումնական գործընթացը կարգավորող ստորաբաժանումների ղեկավարները պատասխանել են ուսանողական ակտիվի հարցերին, պարզաբանել որոշ խնդիրներ:*

Հանդիպմանը ներկա էին ՈւՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ուսումնական գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը, ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի պետ Իրինա Խաչատրյանը, ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ Գոհար Գասպարյանը, ՈւՀՏԱ և կարիերայի բաժնի պետ Կարեն Մեժլումյանը:

Պրոռեկտոր Վ. Յարամիշյանը ուսանողների ուշադրությունը հերթական անգամ հրավիրել է նոր ուսումնական տարվանից իրականացված կառուցվածքային փոփոխություններին և գործառութային տարանջատմանը՝ հորդորելով ընթացիկ խնդիրներով դիմել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին:

Հարցուպատասխանի ձևաչափով հանդիպման ընթացքում ուսանողներն անկաշկանդ ներկայացրել են ուսանողությանը հուզող հարցերը՝ առաջարկելով դրանց լուծման իրենց գաղափարները: Առաջադրված հարցերն առավելապես վերաբերում էին ուսումնական գործընթացի բաղադրիչներին, դրանց կազմակերպման և վերահսկման մեխանիզմների վերանայմանը և այլն:

«Ռեկտորատը հիմնականում տեղյակ է ձեր կողմից բարձրացված հարցերին և ամենօրյա քննարկումներում փորձում է լուծումներ փնտրել, սակայն այս առումով պակաս կարևոր չէ նաև ուսանողների նախաձեռնողականությունը ոչ միայն խնդիր առաջադրելու, այլև դրանց լուծման համատեղ ուղիներ փնտրելու»,- նշել է ուսումնական գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը:

Հանդիպման վերջում համալսարանի աշխատակազմը խոստացել է քննարկել առաջարկությունները՝ որոշումների հիմքում շարունակելով պահել ուսանողամետ քաղաքականության սկզբունքը:



# ԱրՊՀ-ՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ



*Դեկտեմբերի 6-ին ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը «Ներդրումների ճյուղային կառուցվածքի էկոնոմետրիկ վերլուծությունը» թեմայով նախաձեռնել էր գիտական ընթերցումներ՝ զուգահեռաբար ծավալելով քննարկումներ ոլորտի պատասխանատուների հետ:*

Քննարկմանը հրավիրված էին ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, ֆինանսների նախարար Արթուր Հարությունյանը, գյուղատնտեսության փոխնախարար Վիլեն Ավետիսյանը, Ազգային վիճակագրական ծառայության պետ Մանուշ Մինասյանը, «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Միեր Ասրյանը, ԱրՊՀ ղեկավար կազմը, ներկայացուցիչներ պետնախարարի աշխատակազմից, դասախոսներ, ուսանողներ:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ողջունել է ներկաներին և կարևորել ոլորտի ներկայացուցիչների ներգրավմամբ տնտեսագիտության ֆակուլտետի կողմից պարբերաբար արդիական քննարկումների կազմակերպումը՝ հույս հայտնելով, որ ուսանողները դրանցից յուրացնելու են լավագույնը:

«Վերջին շրջանում բավականին շատ է շոշափվում տնտեսական անվտանգության խնդիրը, որի գնահատման շեմային ցուցանիշ է համարվում նաև ներդրումների մակարդակը: Այսօր ԱՀ Կառավարության տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը հենց ներդրումային քաղաքականության ակտիվացումն է և գործարար միջավայրի զարգացումը»,- նշել է տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մանգասարյանը:

Կառավարում մասնագիտությամբ սովորող 2-րդ կուրսի մագիստրանտների կողմից ներդրումների ճյուղային կառուցվածքի ռեգրեսիոն վերլուծության ու ԱՀ տնտեսական ցուցանիշների շրջանակում դրանց արդյունավետության գնահատման վերաբերյալ իրականացված սոցհարցումների և տնտեսության մակարդակը արտացոլող ցուցանիշների վերլուծության հիման վրա ծավալված քննարկմանն արձագանքեցին բոլոր հրավիրվածները: Վերջիններս ոչ միայն բարձր են գնահատել ուսանողների ինքնուրույն եզրակացությունները, այլև տեսակետներ հայտնել քննարկման բաղադրիչների վերաբերյալ:

Խոսելով ԱՀ Կառավարության կողմից վարվող ներդրումային քաղաքականության, դրա արդյունավետության և բարեփոխումների մասին՝ պետնախարարը նշել է, որ ներդրումային համակարգը տնտեսության այն բաղադրիչներից է, որ մշտապես բարելավման կարիք է զգում, և որևէ փուլում դրա արդյունավետությունը բավարար գնահատելը ճիշտ չէր լինի: Ինչ վերաբերում է ուսանողների ինքնուրույն աշխատանքներին՝ Գ. Մարտիրոսյանը դրանք որակել է հետաքրքիր և նպատակային. «Ուսումնասիրության արդյունքներն, ըստ էության, նորություն չեն մեզ համար, սակայն ողջունելի է մագիստրանտների մոտեցումը»:

Գ. Մարտիրոսյանը անդրադարձել է նաև քննարկվող թեմայի վերաբերյալ ԱՀ Կառավարության մոտեցումները, դրանց իրացման ուղիները:



# Ա Շ Խ Ա Տ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ա ր Պ Հ - Ո Ւ Մ



***Դեկտեմբերի 25-ին ԱրՊՀ է այցելել ԱՀ Նախագահի խորհրդական, տ.գ.թ. Արայիկ Հարությունյանը և բուհի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողության մասնակցությամբ անցկացրել աշխատաժողով:***

Ա. Հարությունյանը հանդես է եկել բանախոսությամբ՝ «ԱՀ տնտեսության զարգացման ուղին, մարտահրավերները» թեմայով, որից հետո աշխատաժողովը շարունակվել է հարց ու պատասխանի ձևաչափով:

Բացելով հանդիպումը՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ողջունել է ներկաներին՝ շնորհակալություն հայտնելով Ա. Հարությունյանին՝ ԱրՊՀ այցելելու և բանախոսությամբ հանդես գալու համար:

«Արայիկ Հարությունյանի հասարակական, քաղաքական, տնտեսական գործունեությունը ներկայացնելու կարիք չկա: Բոլորս ծանոթ ենք ԼՂՀ վարչապետի պաշտոնում տասը տարի, այնուհետև պետնախարարի պաշտոնում ծավալած նրա գործունեությանը: Ոչ պակաս կարևոր եմ համարում նաև ԱրՊՀ խորհուրդը տարիներ շարունակ նրա կողմից ղեկավարելը, Արցախի մայր բուհի շրջանավարտ լինելը, որոնցով պայմանավորված՝ նա մշտապես ցանկացած հարցի տվել է օպտիմալ լուծում»,-ասել է ԱրՊՀ ռեկտորը:

Ա. Հարությունյանն ուսանողներին է ներկայացրել Արցախի տնտեսության հիմնական ցուցանիշները, ապագայի տեսլականը: ՀՀ և ԱՀ տնտեսությունների զարգացումը տարանջատելով՝ բանախոսը հանգամանորեն ներկայացրել է ԱՀ տնտեսության անցած ճանապարհը, ներկա վիճակը և զարգացման հեռանկարները: Խոսելով ԱՀ տնտեսության աճի երկնիշ ցուցանիշի մասին՝ նա հատկանշել է, որ ոլորտում առկա աճը համաչափ անդրադառնում է կյանքի որակին՝ փաստական տվյալներ ներկայացնելով Արցախի բոլոր ոլորտների ուղղություններով, այդ թվում՝ առողջապահության, կրթական հաստատությունների, սպորտի, ենթակառուցվածքների և այլ ուղղություններով:

Վերջում Ա. Հարությունյանը ուսանողների շրջանում գործարարությունը խթանելու նպատակով խոստացավ ուսանողների կողմից ներկայացրած լավագույն երեք բիզնես-ծրագրերի իրականացման համար ֆինանսավորման աղբյուրներ գտնել:

# Գ Ի Տ Խ Ո Ր Հ Ր Դ Ի Ն Ի Ս Տ

***Դեկտեմբերի 26-ին կայացած գիտխորհրդի տարեվերջյան նիստում լսվել են մի քանի ամբիոնների և գիտական գրադարանի վարիչի 2017-2018 ուսումնական տարվա հաշվետվությունները, հաստատվել ԱրՊՀ բակալավրիատի կրթական ծրագրով սովորող ուսանողների փորձուսուցման կազմակերպման և անցկացման կանոնակարգը:***

Օրակարգային առաջին հարցը, որ վերաբերում էր նոր ձևավորված գիտական խորհրդի կազմին, ներկայացրեց ռեկտոր Արմեն Սարգսյանը: Ռեկտորը նախ շնորհակալություն հայտնեց նախկին գիտխորհրդին արդյունավետ գործունեության համար՝ նշելով, որ հնգամյա ժամանակահատվածում խորհուրդը զգալի աշխատանքներ է կատարել հատկապես ԱրՊՀ գործունեության կանոնակարգման ուղղությամբ:

«Նախորդ գիտխորհրդի աշխատանքը գնահատելու համար բավական է հիշատակել, որ 90-ից ավելի կարգեր, կանոնակարգեր և ընթացակարգեր են ընդունվել և հաստատվել, օպտիմալացվել է համալսարանի աշխատանքը»,-նշել է ռեկտորը:

Ներկայացնելով գիտխորհրդի ձևավորման ընթացակարգը՝ ի պաշտոնե և ընտրովի անդամների համամասնության հարաբերակցությունը, ընտրովի անդամների՝ ֆակուլտետի խորհրդում քվեարկությամբ հաստատվելն ու հաստատված չափաքանակները, Ա. Սարգսյանը շնորհավորել է խորհրդի նոր անդամներին, մաղթել բեղմնավոր աշխատանք: Գիտխորհուրդը լսել և ի գիտություն է ընդունել բանասիրական և տնտեսագիտության ֆակուլտետների բոլոր ամբիոնների, բնագիտական ֆակուլտետի քիմիայի, պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնների 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները:

Հաջորդիվ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը գիտխորհրդի քննարկմանն է ներկայացրել ԱրՊՀ բակալավրիատի կրթական ծրագրով սովորող ուսանողների փորձուսուցման կազմակերպման և անցկացման կանոնակարգը, մանրամասնել դրա էությունը, նպատակն ու խնդիրները, որն ընդունվել և հաստատվել է խորհրդի կողմից:

Այլ հարցերում գիտխորհրդի կողմից հաստատվել է ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածուի հրատարակումը և մեկ ասպիրանտի գիտահետազոտական պլան:



# ԱրՊՀ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԵԼ Է ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՏԵՓԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ 70-ԱՄՅԱԿԻՆ



***ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.թ., դոցենտ Լիանա Աբրահամյանի նախաձեռնությամբ կայացել է միջոցառում՝ նվիրված մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր, երջանկահիշատակ Ստեփան Պետրոսյանի ծննդյան 70-ամյակին:***

Միջոցառման բացման խոսքում Լ.Աբրահամյանը ներկայացրել է հիշարժան դրվագներ Ս. Պետրոսյանի կենսագրական և մասնագիտական ուղուց, ընդգծել նրա գիտամանկավարժական 35 տարիների ներդրումը գիտության և մանկավարժության զարգացման, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործում:

«Ս. Պետրոսյանն իր ողջ գիտելիքներն ու եռանդն ի սպաս է դրել համալսարանի գիտակրթական համակարգի զարգացման գործին: Նա իր խորը իմացություններով ու բարձր ինտելեկտով նպաստել է իմ ու իմ գործընկերների մասնագիտական հասունացմանն ու կայացմանը»,- նշել է նա:

«Նա կապրի այնքան, որքան մենք հիշում ենք նրան»,- համակարծիք էին գործընկերներն ու ընկերները, ովքեր իրենց ելույթներում ներկայացրեցին Ս. Պետրոսյան մարդուն, ընկերոջը, գիտնականին, մանկավարժին, գործընկերոջն ու ընտանիքի հորը: Իսկ ելույթ ունեցողները սաներն էին, ովքեր նրա իսկ ուղղորդմամբ ընտրել են գիտության և մանկավարժության ճանապարհը և որոնք կրում ու սերունդներին են փոխանցում Ս. Պետրոսյանի դավանած արժեքները:

Հոր հիշատակը մշտապես վառ պահելու համար ընտանիքի անունից երախտագիտության խոսքեր հղեց Ս. Պետրոսյանի որդին՝ Սուրեն Պետրոսյանը. «Շնորհակալ ենք միջոցառման կազմակերպիչներին և ելույթ ունեցողներին՝ հերթական անգամ վերարժևորելու, գնահատելու Ս. Պետրոսյանի վաստակն ու նվիրումը»:

Միջոցառման երկրորդ մասում ուսանողները հանդես են եկել բարձրագույն մաթեմատիկային վերաբերող ընթերցումներով, որոնցից լավագույն ելույթը արժանացել է պատվոգրի:

# ՀԱՆՐՕԳՈՒՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱրՊՀ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ Է. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՇՈՒՇԻԻ «ՇՈՂ» ԿԵՆՏՐՈՆ



***Դեկտեմբերի 12-ին ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի և ուսխորհրդի նախաձեռնությամբ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները այցելել են Շուշիի «Շող» կենտրոն:***

Այցի ընթացքում ուսանողները կենտրոնի սաների համար ներկայացրել են մշակութային ծրագիր, հանդես եկել երաժշտական և պարային համարներով, երեխաներին հանձնել նվերներ:

«Նման միջոցառումները բարոյահոգեբանական տեսանկյունից անչափ կարևոր են ուսանողների համար, քանզի այն ուսուցանող է և օգնում է, որպեսզի ուսանողը իր շահից բացի, կարողանա գնահատել նաև դիմացինի կարգավիճակը և ցույց տա համապատասխան վերաբերմունք: Լավ մասնագետ լինելուց բացի, կարևոր է լավ մարդ լինելը, ճիշտ արժեհամակարգ ունենալը և մարդը՝ մարդու համար սկզբունքով առաջնորդվելը»,-ասել է տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը:

Ինչպես նշում է «Շող» կենտրոնի համակարգող Դիանա Գալստյանը, կենտրոնում ընդգրկված են սոցիալական հիմնախնդիրներ ունեցող ընտանիքների դպրոցահասակ 30 երեխա:

«Երեխաները կենտրոն են հաճախում դպրոցի դասերի ավարտից հետո: Նրանք հանդիպում են սոցիալական աշխատողների և հոգեբանի հետ, իսկ անհրաժեշտության դեպքում անհատական հանդիպումներ են ունենում նշված մասնագետների հետ»:

Հավելենք, որ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները պարբերաբար կամավորական և ճանաչողական աշխատանքներ են իրականացնում: Օրերս էլ Գ. Իշխանյանի ղեկավարությամբ մի խումբ ուսանողներ այցելել են Ապրիլյան պատերազմի զոհերից մեկի ընտանիք, ցուցաբերել նյութական համեստ օգնություն, նաև նվերներ մատուցել երեխաներին:

«Մենք պետք է ոչ միայն խոսքով, այլև գործով ցույց տանք, որ մեր խաղաղության և անվտանգության երաշխավորների ընտանիքները մեր ուշադրության կենտրոնում են»,- նշել է ուսանողուհի Լուիզա Միրզոյանը և հավելել, որ նմանատիպ ծրագրերը շարունակական կլինեն նաև առաջիկայում:

# ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԱՄՓՈՓԵԼ ԵՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



*Արդեն մեկ տարի է՝ ինչ ԱրՊՀ-ում գործում է հոգեբանական կենտրոն: Այսօր կենտրոնում տեղի է ունեցել միջոցառում, որի ընթացքում ներկայացվել են մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքները, հնչեցրել խնդիրները, նախանշել անելիքները: Միջոցառմանը ներկա էին ԱրՊՀ պրոռեկտորներ, մանկավարժություն և սպորտ ֆակուլտետի ղեկավար կազմը, դասախոսներ, ուսանողներ:*

Ողջունելով ներկաներին և շնորհավորելով կենտրոնի մեկամյակի առթիվ՝ ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանը կարևորել է կենտրոնի գործունեությունը՝ ընդգծելով ՀՀ-ում գործող «Ապագա» հոգեբանական ծառայության կենտրոնի հիմնադիր, ՀՊՄՀ դասախոս, հ.գ.թ., դոցենտ Արմեն Բեջանյանի դերը՝ ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի կայացման գործում: Խոսելով կատարած աշխատանքներից՝ պրոռեկտորն առանձնացրել է երեք կարևոր ուղղություն՝ ուսանողների ուսումնագիտական զարգացում, համագործակցություն ՊԲ սպա-հոգեբանների հետ, հանրային պատասխանատվության ստանձնում, փաստել դրանց արդյունավետությունը:

Հոգեբանական կենտրոնի տնօրեն Անահիտ Գասպարյանը ներկայացրել է հաշվետվություն՝ մեկ տարվա կատարած աշխատանքների մասին: Նրա խոսքով՝ կազմակերպվել են մի շարք դասընթացներ, որոնք վարել են Արցախի և ՀՀ անվանի հոգեբաններ, կենտրոնի նախաձեռնությամբ ԱրՊՀ մի խումբ ուսանողներ վերապատրաստում են անցել ՀՀ-ում, անց են կացվել սպա-հոգեբանների վերապատրաստում- հավաքներ, կազմակերպվել է Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների միջին օղակի դասղեկների վերապատրաստման դասընթացներ և այլ միջոցառումներ:

«Փետրվարի 1-ից սկսվեց նախակրթարանի գործունեությունը, որտեղ մեր ֆոկուս խումբը 3-5 տարեկան երեխայի հոգեկան զարգացումը գնահատող դիագնոստիկ փաթեթի միջոցով ապահովում է երեխաների մտածողության, հիշողության, խոսքի, ուշադրության, ստեղծագործական ունակությունների զարգացումը»,- կարևորելով կենտրոնում գործող նախակրթարանի դերը՝ նշել է նա:

ԱրՊՀ 1-ին կուրսեցիների ուսումնական գործունեության մոտիվացիայի մակարդակի որոշման հետազոտության արդյունքներն է ներկայացրել հոգեբանական կենտրոնի պրակտիկ մանկավարժ Անահիտ Սարգսյանը:

Սպա-հոգեբանների վերապատրաստման ուղղությամբ կատարված աշխատանքը կարևորել է ՊԲ ԱՀՏԱ բաժնի հոգեբանական բաժանմունքի ավագ սպա, ավագ լեյտենանտ Նարինե Հայրապետյանը:

Հ.գ.թ., դոցենտ Լուսինե Ղարախանյանը, ով մեկ տարվա ընթացքում ակտիվ գործունեություն է ծավալել կենտրոնում, իր խոսքում նշել է. «Աշխարհը և մենք գտնվում ենք ռիսկային գոտում: Աշխարհաքաղաքական ներկա իրավիճակում բեկվում է մարդը: Այս պայմաններում կարևոր է առողջ ու ներդաշնակ հոգեկան աշխարհ ունենալը: Երբ մարդը ջերմություն, սեր, նվիրում է տարածում, ընդարձակվում է նրա հոգեբանական հարմարավետության դաշտը: Խնամեք ձեր հոգեկան աշխարհը»:

ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը նշել է, որ քիչ չէ մեկ տարվա կատարած աշխատանքը, սակայն ցանկալի կլիներ գործունեության ընթացքում շեշտադրել նաև գիտական ուղղվածությունը:

Միջոցառման ավարտին կենտրոնի գործունեությանն օժանդակելու և ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար շնորհակալագրերի են արժանացել հոգեբաններ Լուսինե Ղարախանյանը, Եվգենյա Սարգսյանը և Արմինե Ավանեսյանը: Իսկ կենտրոնի տնօրեն Անահիտ Գասպարյանը շնորհավորագրի է արժանացել ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Էլլադա Բաղդասարյանի կողմից:

# ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ ԲԱՐՁՐ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՎԱՍՏԱԿԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

*Դեկտեմբերի 20-ին ամփոփվել են ԱրՊՀ-ում ինֆորմատիկայից կայացած օլիմպիադայի արդյունքները, և տեղի է ունեցել պարգևատրման արարողություն:*

Օլիմպիադային մասնակցել են 40 ուսանող և աշակերտ՝ ԱրՊՀ, Գրիգոր Նարեկացի համալսարանի ուսանողներ, Ստեփանակերտի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ և համար 8 դպրոցների աշակերտներ: Առավելագույն միավորներ են վաստակել ԱրՊՀ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Լիանա Մեսրոպյանը, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» 3-րդ կուրսի ուսանող Տիգրան Հովհաննիսյանը, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» 2-րդ կուրսի ուսանողուհի Լիա Ամիրխանյանը: Բարձր միավորներ վաստակած ուսանողները ԱրՊՀ ռեկտորի կողմից պարգևատրվել են պատվոգրերով, իսկ ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտները՝ խրախուսվել են շնորհակալագրերով և գրքերով: Օլիմպիադան արձագանք է գտել նաև Ստեփանակերտի որոշ գործատուների շրջանում, և «Զոբս էլեկտրոնիկս», «Ինստիգեյթ մոբայլ», «Կապիտալ Սոֆթ» ընկերությունները նվերներով խրախուսել են ակտիվ մասնակցություն ցուցաբերած ուսանողներին և աշակերտներին: ԱրՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Վազգեն Առստամյանը, շնորհակալություն հայտնելով օլիմպիադայի մասնակիցներին և աջակիցներին, նշել է, որ այս օլիմպիադան նախորդ տարիներին կազմակերպածներից տարբերվում էր մասնակիցների քանակով և աշխարհագրությամբ:



# ԱՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 12-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԴՊՐՈՑ



*ԱՀ Սահմանադրության ընդունման 12-րդ տարեդարձին ընդառաջ ԱրՊՀ իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Ռիտա Առուստամյանի նախաձեռնութամբ իրավագիտություն մասնագիտությամբ սովորող մի խումբ ուսանողներ դասեր են վարել Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 դպրոցում:*

Ուսանողները աշակերտներին ներկայացրել են Սահմանադրության էությունը, կառուցվածքը, կառավարման և իշխանության մարմինների համակարգը, նրանց իրավասություններն ու ձևավորման կարգը, ընտրական համակարգը, քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, ապա պատասխանել աշակերտների՝ իրավական դաշտի վերաբերյալ հնչեցված հարցադրումներին, պարզաբանել խնդիրներ:

Կարևորելով բուհ-դպրոց համագործակցության ամրապնդմանն ուղղված միջոցառումները՝ իրավունքի ամբիոնի վարիչը նշել է, որ քաղաքացիական ակտիվ դիրքորոշում պետք է ձևավորել հենց դպրոցական նստարանից:

«Այսպիսի հանդիպում-միջոցառումներով հնարավորություն է ստեղծվում երկուստեք բարելավելու մասնագիտական գիտելիքներն ու հանրային ելույթների փորձ ձեռք բերել՝ միաժամանակ նպաստելով իրավագիտակցության մակարդակի ձևավորմանն ու բարձրացմանը»,- նշել է Ռ. Առուստամյանը:

# ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Ստեփանակերտում հարգել են 1988թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջաններում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի զոհերի հիշատակը: ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողությունը, ռեկտոր Արմեն Սարգսյանի ղեկավարությամբ, հարգանքի տուրք են մատուցել երկրաշարժի զոհերի հիշատակին՝ հուշահամալիրում Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին ծաղիկներ խոնարհելով:*

Սպիտակի երկրաշարժը տեղի է ունեցել Հայաստանի հյուսիսային մասում (այն ժամանակ Խորհրդային Միության կազմում) 1988 թվականի դեկտեմբերի 7-ին՝ տեղական ժամանակով ժամը 11:41-ին: Սպիտակ, Լենինական (Գյումրի) ևԿիրովական (Վանաձոր) քաղաքները մեծ մարդկային կորուստներ են կրել, ավերվել են բազմաթիվ շենքեր, այլ կառույցներ, մոտակա գյուղեր:Պաշտոնական տվյալներով աղետալի երկրաշարժի զոհ է դարձել ավելի քան 25 հազար մարդ:

# ՀԱՇՎԵՏՈՒ ԲԱՑ ԴԱՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

*ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի գրականության և լրագրության ամբիոնի դասախոս,բ.գ.թ., դոցենտ Զինաիդա Բալայանը մագիստրատուրայի դասընթացներն ամփոփել է հաշվետու բաց դասերով:*



Բաց դասերը կազմակերպվել են լրագրության մագիստրատուրայի 1-ին, 2-րդ և հայ գրականություն 2-րդ կուրսերում, որին մասնակցել են նաև ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը և բանասիրական ֆակուլտետի ղեկավարությունը: «Արվեստի տեսություն և պատմություն», «Քաղաքակրթությունների պատմություն», «Հայ-համաշխարհային գրական կապերը» դասընթացների շրջանակում մագիստրատուրայի ուսանողները զեկուցումներով ներկայացրել են իրենց ստացած գիտելիքները, պատասխանել հարցերի:

«Հիմնական նպատակս էր ուսանողներին հաղորդակից դարձնել համաշխարհային քաղաքակրթության պատմությանը, նվաճումներին, արվեստի տեսությանն ու պատմությանը, հայ և համաշխարհային գրական կապերին՝ հին ժամանակներից սկսած մինչև մեր օրեր, և այդ ամենի արդյունքում ստացած նրանց գիտելիքներն ամփոփել բաց դասերի միջոցով, որը, իմ կարծիքով, հաջողվել է»:

ԱրՊՀ պրոռեկտորն ու բանասիրական ֆակուլտետի դեկանը կարևորել են ուսանողների ստացած գիտելիքների յուրահատուկ հաշվետվությունները նման ձևաչափով՝ նշելով, որ նմանատիպ բաց դասերի կազմակերպումը ընդօրինակման արժանի երևույթ է:

# ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆՈՒՄ

***ԱրՊՀ լրագրության մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները PR ինտերակտիվ ընթերցումների ձևաչափով ներկայացրել են հանրային կապեր և հաղորդակցական տեխնոլոգիաներ դասընթացի շրջանակում ստացած իրենց գիտելիքները:***



Լրագրություն մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողները, լսարանի հետ անմիջական կապ պահպանելով, ներկայացրել են հանրային կարծիքի՝ որպես զանգվածային գիտակցության ձևի ներգործության գործիքակազմը՝ առանձնացնելով գովազդի, բրենդի և բրենդինգի, գույնի հոգեբանության, քաղաքական և գործնական հոգեբանության, ոչ վերբալ հաղորդակցության առանձնահատկությունները: Նշված թեմաներն ուսանողները տեղայնացրել և գործնականում ցույց են տվել հայրենական արտադրանքի, ինչպես նաև համալսարանի և նրա աշխատակիցների օրինակով:

Ելույթներից հետո, ամփոփելով միջոցառումը, ուսանողներն իրենց կարծիքն են հայտնել նաև դասընթացի վերաբերյալ՝ այն որակելով դինամիկ և մոտիվացնող:

«Հանրային կապերի նշանակության մասին ամեն օր ենք լսում, սակայն այլ բան է, երբ ամենօրյա հանձնարարություններով հնարավորություն ես ունենում ինքդ ուսումնասիրելու և իրացնելու PR գաղափարներդ»,- ասում է Վալենտինա Գրիգորյանը:

Լիդիա Սահակյանը, որ համալսարանականների իմիջն է ներկայացրել, նկատում է. «Ուսումնասիրելով գործարար տղամարդու և կնոջ իմիջը, գործնական իմիջի բաղադրիչներն ու առանձնահատկությունները՝ նորովի եմ բացահայտել դասախոսներին և աշխատակիցներին»:

«Այս օրերին բոլորս քաղաքական իրադարձություններով ենք շնչում: Իսկ դասընթացը լավագույն հնարավորություն էր ուսումնասիրելու մեր ժամանակների քաղաքական գործիչներին՝ իմիջի էվոլյուցիայի առումով»,- ասում է Մերի Գաբրիելյանը:

Ընթերցումներին հրավիրվածները ևս գնահատել են ուսանողների նորարար մոտեցումը ներկայացվող թեմաներին՝ կոչ անելով հավատարիմ մնալ լրագրողի կոչմանը:

«Մշտապես հավատարիմ եղեք լրագրողի՝ ճշմարիտը ստահոդից տարբերելու առաքելությանը: Դուք հասարակության այն շերտն եք, որ, անկախ հանգամանքներից, ինքն իրեն և մասնագիտությանը տված ուխտը չպիտի դրժի»,- ընդհանրացրել է ֆակուլտետի դեկան Լուսինե Մարգարյանը: Իսկ բանաստեղծ Սոկրատ Խանյանը բանաստեղծություն է նվիրել 4-րդ կուրսի ուսանողուհիներին:

Հավելենք, որ դասընթացը վարել են բ.գ.թ., դոցենտ Շուշան Ասկարյանը և Անուշ Դոլուխանյանը:



# ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՀԱՇՎԵՏՈՒ ՄԻՋՈՑԱՌՄԱՄԲ

*ԱրՊՀ մանկավարժություն և սպորտ ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները մեկ ամիս տևողությամբ ակտիվ մանկավարժական փորձուսուցում են անցել Ստեփանակերտի Եղիշե Չարենցի անվան համար 7 հիմնական դպրոցում: Ամփոփելով փորձուսուցման արդյունքները՝ ուսանողները տարրական դասարանների աշակերտների ընդգրկմամբ կազմակերպել են հաշվետու միջոցառում՝ «Թումանյանի աշխարհում» խորագրով:*



Ներկա էին ԱրՊՀ դասախոսներ, ուսանողներ, դպրոցի ուսուցիչներ, ծնողներ: Միջոցառման ընթացքում աշակերտները ներկայացրել են Հովհաննես Թումանյանի կյանքն ու գործունեությունը, ասմունքել մեծ գրողի բանաստեղծություններից, հանդես եկել հեղինակի ստեղծագործությունների բեմականացմամբ, բանաստեղծությունների հիման վրա ստեղծված երգերի, ազգագրական և ժամանակակից պարերի կատարումներով:

ՏՄՄ 3-րդ կուրսի ուսանողուհի Մարիա Միրզախանյանը նշել է, որ մեծ ոգևորությամբ և բարձր արդյունավետությամբ է անցել փորձուսուցումը, բուհում ստացած գիտելիքները կիրառել են գործնականում՝ կարճ ժամանակահատվածում ավելի սիրելով ուսուցչի մասնագիտությունը: Միջոցառմանն առանձնահատուկ սիրով ու նվիրումով են պատրաստվել, որտեղ իրենց ներդրումն են ունեցել ամբողջ կուրսի ուսանողները:

Ամփոփելով փորձուսուցման արդյունքները՝ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Էլլադա Բաղդասարյանը



գոհունակություն է հայտնել ուսանողներից և դպրոցի համակազմից՝ փորձուսուցումը պատշաճ մակարդակով իրականացնելու համար, կարևորել դասվարների աշխատանքը՝ ուսանողներին աջակցելու գործում:

Ուսանողներն իրենց հերթին շնորհակալություն են հայտնել դպրոցի տնօրենությանը՝ ջերմ ընդունելության, անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ փոխանցելու համար և շնորհակալագիր հանձնել դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանին:

«Տարիներ շարունակ ԱրՊՀ ուսանողների մանկավարժական փորձուսուցումը կազմակերպվում է Ստեփանակերտի Եղիշե Չարենցի անվան համար 7 դպրոցում: Ավանդույթ է դարձել արդեն փորձուսուցումը հաշվետու միջոցառմամբ ամփոփելը: Հավատարիմ այդ ավանդույթին՝ այսօր ևս ուսանողները լավագույնս դրսևորեցին իրենց մանկավարժական կարողությունները: Բուհ-դպրոց համագործակցությունն այսպես է ամրապնդվում և առողջ պտուղներ տալիս»,-նշել է դպրոցի տնօրենը՝ ուսանողներին հորդորելով շատ ընթերցել, սիրել գիրքը, մանկավարժությունը և ընտրած մասնագիտության մեջ կայանալ:

Փորձուսուցման մեթոդիստ, մ.գ.թ., դոցենտ Աիդա Զաքարյանը նշել է, որ ուսանողներին հաջողվել է իրենց տեսական գիտելիքները կիրառել դասագործընթացում.«Ինչպես ասում են՝ գիտելիքը գանձ է, իսկ փորձը՝ նրա բանալին:Դասալսումների արդյունքները ցույց տվեցին, որ մեր ուսանողները կարողանում են տեսականը կիրառել գործնականում: Արդյունքները, մեր կարծիքով, գոհացուցիչ էին և բավարարում էին պահանջվող չափանիշներին»: